Արժեթղթերի տեսակները, որոնցում կարող են ներդրվել հաճախորդի միջոցները

Բանկը հաճախորդի հաշվին և նրա Պատվերների հիման վրա մատուցում է Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում (այդ թվում բորսայական առևտրի միջոցով) գնման և վաճառքի ծառայություններ:

Պետական պարտատոմսերը թողարկվում են ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնական Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության անունից և ապահովված են պետության ողջ ունեցվածքով: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկվում են կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ պարտատոմսեր: Կարճաժամկետ պարտատոմսերը թողարկվում են մինչև 12 ամիս, միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 15 ամսից մինչև 5 տարի, իսկ երկարաժամկետ պարտատոմսերը՝ 6-20 տարի մարման ժամկետով: Պարտատոմսեր կարող են ձեռք բերվել իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից:

Արժեթղթերի տեսակներն են.

- զեղչատոկոսային ՀՀ Պետական Կարճաժամկետ Պարտատոմսեր պարտատոմսեր, որոնք ենթադրում մարման օրը անվանական արժեքի մարում:
- արժեկտրոնային ՀՀ Պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ պարտատոմսեր, որոնք ենթադրում են արժեկտրոնների հավասարաչափ վճարումներ, ներառյալ մինչև պարտատոմսի մարման օրը: